ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

10.12.2024թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Գ.Քարհանյանը - մարզպետի խորհրդական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Վ.Ջաղինյանը, Ա.Մատինյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Հակոբյանը, Է.Հախվերդյանը, Ա.Մալոյանը, Ա.Բեջանյանը, Գ.Մելիքսեթյանը, - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը ներկայացրեց մարզպետի նորանշանակ օգնական Հայկ Հակոբյանին, շնորհավորելով պաշտոնի նշանակվելու առիթով՝ մաղթեց համագործակցային արգասաբեր աշխատանք՝ տրված հանձնարարականների և պայմանագրով սահմանված պարտականությունների կատարման ու առաջադրված խնդիրների լուծման ուղղությամբ:

Մարզպետը ներկայացրեց նաև իր մտահոգությունները աշխատակազմի աշխատակիցների կողմից տրված հանձնարարականների կատարման նկատմամբ անտարբերության, հարցերին մակերեսային լուծումներ տալու, ժամկետների և սահմանված կարգի խախտումներ թույլ տալու դեպքերի վերաբերյալ: Հորդորեց՝ լինել ավելի պատասխանատու, սրտացավ վերաբերմունք դրսևորել հանձնարարականների պատշաճ կատարման նկատմամբ:

Մարզպետն իր նկատառումները ներկայացրեց նաև քաղաքացիների ընդունելության ժամանակ տրված հանձնարարականների և բարձրացված հարցերի լուծմանն ուղղված աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ՝ պահանջելով, որ

ստորաբաժանումների ղեկավարները հարցերի քննարկման և լուծման վերաբերյալ սահմանված կարգով ներկայացնեն գրավոր զեկուցագրեր:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերչի վարչության պետ Կ. Ադամյանը ներկայացրեց վարչության կողմից իրականացված աշխատանքների, մասնավորապես՝ հայտարարված մրցույթների և դիմորդների վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև՝ աշխատակազմի կենսաթոշակային տարիքի անցած և անցնող աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Կ.Աշրաֆյանին և աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ. Ադամյանին

2.1. Մշտապես հաշվետվություն ներկայացնել հայտարարված մրցույթների ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկություններ՝ կենսաթոշակային տարիքի հասած անձանց պատշաճ կարգով հանգստի ուղարկելու միջոցառման ձևաչափի վերաբերյալ:

2.2. Վարչապետի հանձնարարականն ապահովելու նպատակով ծառայողական ավտոմեքենաների վերաբաշխում կատարել և ներկայացնել առաջարկություններ հանձնվող ավտոմեքենաների, ինչպես նաև հաշվեկշռում մնացող մեքենաների պահպանության կազմակերպման և շահագործման վերաբերյալ:

3. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանը ներկայացրեց վարչության կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, մասնավորապես՝ համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և ցուցանիշների մասին, ինչպես նաև սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվություն:

Լոռու մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալներ՝ Գ.Ասրյանին, Հ.Ավետիսյանին, աշխատակազմի գլխավոր քարտուղար՝ Կ.Աշրաֆյանին, աշխատակազմի ֆինանսական վարչության պետ՝ Մ.Դալլաքյանին

3. Անհրաժեշտ հնարավոր միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշներն ապահովելու ուղղությամբ և ամենօրյա հաշվետվություն ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ:

4. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Ռ.Մարգարյանը ներկայացրեց վարչության կողմից իրականացված աշխատանքների և առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետն իր մտահոգությունն ու դժգոհությունը հայտնեց Լոռու մարզի Տաշիր համայնքում քաղաքացիների կողմից ճանապարհի վերանորոգման հետ կապված հարցով իրականացված ակցիայի նկատմամբ անտարբեր վերաբերմունքի և անգործության դրսևորման վերաբերյալ:

Հանձնարարվեց.

4. Մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին և աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Ռ.Մարգարյանին.

4.1 1-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Տաշիր համայնքի միջպետական նշանակության ճանապարհի հետ կապված խնդրի կարգավորման վերաբերյալ:

Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ՝ Ռ.Մարգարյանին, ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանին.

4.2 Ամենօրյա հաշվետվություն ներկայացնել սուբվենցիոն և այլ միջոցներով ու ծրագրերով իրականացվող աշխատանքների ընթացքի և ֆինանսավորման վերաբերյալ:

5. Լոռու մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վ.Ջաղինյանը ներկայացրեց վարչության կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն և տեղեկատվություն, մասնավորապես՝ Օձունի առողջության կենտրոնի շենքի հատկացմանը կամ վերանորոգմանն առաջադրվող տարբերակների վերաբերյալ:

Մարզպետը հանձնարարեց քննարկման նպատակով ներկայացնել առաջարկությունների փաթեթ:

Ելույթ ունեցան մյուս ստորաբաժանումների ղեկավարները, որոնք ներկայացրեցին ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն և հաշվետվություններ, ինչպես նաև առաջարկություններ :

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-12-13 10:28:04 GMT+4
Հավաստված է ԷԿԵՄԴ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: GHAZARYAN ARAM 2003720081 **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99